

Մ Ի Ո Ն

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Բոլոր երկիրներու համար ՄԻՈՆԻ Տարեկան բաժնեգինն է

Անգլ. Շէյք 6 (Ամեր. Տււր 1.50) կամ անոր համարժէքը.

Սուսմանայ կամ վեցամսեայ բաժանորդագրութիւն չկայ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԽԻԿ Է

Հասցէ՝ Rédaction de la Revue Arménienne 52011

Patriarcat Arménien

JÉRUSALEM — Palestine

Ջ Ե Կ Ո Յ Ց

Հ. Բ. Ը. Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

ԴԱՍԱԳԻՐՔԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Որոշուած ըլլալով նախընտրաբար հրատարակել զաղութահայ նախակրթարաններու առաջին չորս դասարաններուն յատուկ այն անհրաժեշտ դասագիրքերը, Նիկոսիոյ Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ կազմուած Դասագիրքերու Ցանձմաժողովը պատրաստ է նկատի առնելու այն դիմումները որ պիտի կատարուին հետեւեալ դասագիրքերուն համար. —

1. — ՀԱՅՆՐԷՆ ԱՇԽԱՂԱԲԱՐ.
2. — ԿՐՕՆԻ ԵՒ ԲԱՐՈՑԱԽՈՍՈՒԹԻՒՆ.
3. — ԱՇԽԱՂԱԳՐՈՒԹԻՒՆ.
4. — ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ.

Նկատի առնելով որ այս դասագիրքերը յատուկ են նախակրթարանի առաջին չորս դասարաններուն, աւելորդ է շեշտել թէ անոնք պէտք է պատրաստուած ըլլան պարզ, ճշգրիտ եւ ժուժկալ ոճով եւ պարունակութեամբ:

Հարկ չենք զգար այս դասագիրքերուն համար ուսման ծրագիր ներկայացնել, այն պատճառով որ դասագիրք պատրաստողները ուսուցիչներ պիտի ըլլան եւ պարտին զիսեալ թէ համապատասխան դասարաններու գիրքերը ի՞նչ ծաւալ եւ տարողութիւն պէտք է ունենան: Ի հարկին փափաքողները կրնան իրենց առաջնորդ ունենալ ուսման այն ծրագիրը զոր պատրաստեց Միութիւնը զաղութահայ տարրական նախակրթարաններու համար եւ զոր կարելի է հայթայթել Միութեան Ընդհ. Տնօրէնութեան, Կեդր. Ցանձմաժողովներէն եւ Կրթական Գործիչներէն:

Այսուհանդերձ Ցանձմախումբը սիրայօժար պիտի հաղորդէ իրմէ ուզուած տեղեկութիւնները:

Գալով հեղինակներու յատկացուելիք վարձատրութեան, իւրաքանչիւր պրակի համար 2 — 2.50 անգ. ոսկի է: Զեռագիրները նկատի պիտի առնուին ստացման թուականի կարգով:

Պէտք է զիմեւ ուղղակի Մելգոնեան Կրթական Հաստատութեան Տնօրէնութեան՝ հետեւեալ հասցէով.

Institut Melkonian, NICOSIE (Chypre)

Բաբիշ, 2 Մարտ 1937

Դ Ի Ո Ն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԵՆՈՐԷՆՈՒԹԵԱՆ